



Հայաստանի  
Հանրապետության  
Կենտրոնական բանկ

# Դրամավարկային քաղաքականության որոշում

---

10 Դեկտեմբերի 2024թ.

# 2024 թվականի դեկտեմբերի 10-ի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի որոշում



2024թ. դեկտեմբերի 10-ի նիստում ՀՀ ԿԲ Խորհուրդը որոշեց

**Քաղաքականության տոկոսադրույքն իջեցնել 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 7%.**


ՀՀ ԿԲ կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 8.5%

ՀՀ ԿԲ կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 5.5%

# Խորհուրդը գնահատում է, որ ավելի ցածր վերաֆինանսավորման տոկոսադրույքն անհրաժեշտ է միջնաժամկետում գնաճի 4% մակարդակի և գների կայունության նպատակի իրագործման համար:



ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը և միջբանկային շուկայի տոկոսներ




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

**2024 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում 12-ամսյա գնաճը պահպանվում է նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում՝ նույնքերին կազմելով 1.4%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս պահպանվել է ցածր մակարդակում՝ հոկտեմբերին կազմելով 0.6%:**



**Հիմնական ապրանքախմբերի նպաստումը 12-ամսյա գնաճին (տոկոսային կետ)**




Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ Կենտրոնական բանկի վիճակագրություն

# 2024 թ-ի չորրորդ եռամսյակում համաշխարհային և Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճի դանդաղման ռիսկերը պահպանվում են:




Համաշխարհային գնաճը շարունակում է դանդաղել, սակայն գործընկեր երկրներում կոշտ գներով բնութագրվող ապրանքների և ծառայությունների գները դեռևս մնում են հարաբերականորեն բարձր:

Գնաճը գործընկեր երկրներում և ՀՀ-ում, տ/տ աճ, %



Աղբյուրը՝ երկրների վիճակագրական ծառայություններ

Միջազգային ապրանքահումքային շուկաներում գների աճի և առաջարկի արժեզրեցման հնարավոր խաթարման տեսանկյունից ռիսկերը պահպանվում են՝ պայմանավորված աշխարհաքաղաքական խնդիրներով, ինչպես նաև միջազգային առևտրային հարաբերություններում աճող լարվածությամբ:




Աղբյուրը՝ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն(FAO)

# Արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում են թույլ գնաճային ազդեցություններ




Միաժամանակ, գործընկեր երկրներում հատկապես ԱՄՆ-ում, չնայած վերջին շրջանում արձանագրված որոշակի թուլացմանը, աշխատաշուկայի պայմանները մնում են խիստ: Մյուս կողմից՝ էականորեն ավելացել են միջնաժամկետում ԱՄՆ հարկաբյուջետային քաղաքականության կողմից ամբողջական պահանջարկի խթանման չափի և դրանից բխող երկարաժամկետ տոկոսադրույքների վերաբերյալ անորոշությունները:



Աղբյուրը՝ ԱՄՆ էներգետիկայի տեղեկատվական գործակալություն

Այս համատեքստում հավանական է, որ առաջատար երկրների կենտրոնական բանկերը առաջիկայում կշարունակեն քաղաքականության տոկոսադրույքների աստիճանական, նախկին սպասումների համեմատությամբ ավելի դանդաղ թուլացումը՝ առաջիկայում դեռևս պահպանելով դրամավարկային համեմատաբար խիստ պայմանները

Շուկայի մասնակիցների կողմից ԱՄՆ ԴԴՀ տոկոսադրույքի վերաբերյալ սպասումներ




Աղբյուրը՝ Ատլանտայի ԴԴՀ


# 2024 թվականի չորրորդ եռամսյակում Հայաստանում տնտեսական ակտիվությունը շարունակել է մոտենալ երկարաժամկետ կայուն աճի գնահատվող մակարդակին:



Տնտեսական աճին մեծապես նպաստել է շինարարության, ծառայությունների և առևտրի ճյուղերի բարձր աճը: Այն շարունակել է կրել որոշ կարճաժամկետ գործոնների ազդեցությունը՝ պարունակելով էական անորոշություններ տնտեսական աճի կայունության, երկարաժամկետ հեռանկարի, ինչպես նաև ներքին պահանջարկի հետագա միտումների վերաբերյալ:



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ

# Նման իրավիճակում աշխատաշուկայի պայմանները որոշակիորեն թուլացել են՝ արտահայտվելով աշխատավարձերի, կոշտ գներով բնութագրվող ծառայությունների գնաճի և գնաճային սպասումների որոշակի նվազմամբ:




Գնաճային սպասումներն ըստ ԿԲ հարցումների



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

10 դեկտեմբերի, 2024թ.

Ոչ արտահանելի կոշտ գների և աշխատավարձերի աճը, տ/տ, %




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ



# Բարձր անորոշության պայմաններում, հաշվի առնելով գների կայունության նպատակին հասնելու իր հանձնառությունը, Խորհուրդն իր քննարկումների ընթացքում դիտարկում է բազմաթիվ սցենարներ



**Տիպային սցենարներ – 2024թ. 4-րդ եռամսյակ**



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

## Ա տիպի սցենարներ,

այդ թվում՝ ներքին տնտեսությունում ավելցուկային պահանջարկի ձևավորման և երկարատև պահպանման, ինչպես նաև երկարաժամկետ տոկոսադրույքների վերաբերյալ անորոշությունները, պահանջում են քաղաքականության՝ շուկայական սպասումների համեմատությամբ ավելի կոշտ արձագանք՝ գների կայունության նպատակի ապահովման ռիսկերը կառավարելու համար

## Բ տիպի սցենարներ,

այդ թվում՝ կապված շինարարության ոլորտի աստիճանական դանդաղման, պահանջարկի թուլացման և ցածր գնաճային միջավայրի երկար պահպանման ռիսկերի հետ: Դա ենթադրում է քաղաքականության տոկոսադրույքի՝ շուկայի սպասումների համեմատությամբ ավելի արագ և մեծ չափով նվազման ուղի՝ միջնաժամկետ հորիզոնում պահանջարկը կարգավորելու և գնաճը նպատակային ցուցանիշի շուրջ կայունացնելու համար:



**Արձանագրելով Բ տիպի սցենարների նյութականանալու ավելի մեծ հավանականությունը, սակայն կարևորելով նաև Ա տիպի սցենարներից բխող էական ազդեցությունների կառավարման անհրաժեշտությունը՝ ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց շարունակել դրամավարկային պայմանների աստիճանական թուլացումը**

**Խորհուրդը կշարունակի մշտադիտարկել տնտեսության զարգացման սցենարները և պատրաստ է ձեռնարկելու համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 4% մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:**



# Շնորհակալություն